

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

**ԹԻՖԼԻՍԿԱՆ ՀԱՅԿԱՆ ՄԵԾԷՐԸ**

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի  
 Тифлисъ. Редакция „Мшакъ“

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգի գոյութեան հիմքը։— Ե ե բ բ ի ն տ ե ս ու լ թ ի ւ ն։ Ե ե բ բ ի ն լ ու բ ի ն։ Ա, ր տ ա բ ի ն տ ե ս ու լ թ ի ւ ն։ Ա ն զ ի լ ա։ Կ, Պ օ լ ի ա զ զ յ ա յ ի ժ ո ղ զ ի ն ի ս տ ր։ Դ, ա մ ա կ թ ի ւ բ բ ի յ ա յ ի զ։ Ա, ր տ ա բ ի ն լ ու բ ի ն։ — «Մշակ» հեռագիրներ։ — Տեղեկացոյց։

ԱԶԳԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԸ

Լժևն ազգի գոյութեան հիմքը՝  
հոգ է։ Ուրեմն ամեն ազգի հա-  
տարակական գլխաւոր ոյժը եր-  
կրագործութիւնն է։

Մի ազգ, որ հետզհետե կորցնում է իր երկրագործական դասը, նա անհետանալու է որպես ազգութիւն աշխարհի երեսից:

Ահա այս է պատճառը, որ մենք հայերս պետք է մեր ամբողջ ոյժերը գործ դնենք մեր երկրագործական դասը պահպանելու համար: Այդ բառական չէ, մենք պետք է աշխատենք նոր, ժամանակակից կազմակերպութիւն տալ այդ դասակարգին, նոր, կատարելագործված ձևեր մտցնել մեր երկրագործ դասի աշխատանքի մէջ, պետք է մեր երկրագործական դասի գոյութեանը նոր ոյժ տանք:

Այդ պատճառով պետք է աշխատենք հիմնել ամեն տեղ երկրագործական ընկերություններ, որոնք նպաստելու են հայ երկրագործ դասի մոտաոր զարգացման, ջանալու են բարւոքել երկրագործի նիւթական զրուծիւնը, օգնելու են նրան գործ զնել իր արհեստին եւրօպական ամենամոտր, կատարելագործված միջոցներ:

Հարկաւոր է աշխատել Տիմ-  
նել փոխատու ընկերութիւններ,  
որոնք գումարներ փոխ տալու են  
երկրագործին փոքր տոկոսներով,  
պէտք է իրագործել երկրագործա-  
կան ընդհանուր դրամարկւններ,  
որոնց գումարներով հարկաւոր է  
բերել տալ կատարելագործված  
երկրագործական մեքենաներ և  
այլն....

Ինչի ստորանկից անհրաժեշտ կը լիներ իրագործել մեր գիւղերում կամ քաղաքներում երկրագործական սկզբնական զպրոցներ, կամ գոնէ մեր եղած զպրոցներում մտցնել երկրագործական ուսումը:

Իսկ ինչ գրութեան մէջն է մեր այժմեան երկրագործութիւնը, ինչ վիճակի մէջն է մեր այժմեան երկրագործ դասը, ինչ հիմքերի վրա է կայանում մեր երկրի երկրագործական արուեստը, ինչ աւանդութիւններ, սովորութիւններ են սիրապետում, ինչ լաւ և վատ միջոցներ են գործ զրկում այդ դասակարգի պարապմունքների մէջ, ինչ ձևով վարում են գետինը, ցանում են, հնձում կամ կասում են, ինչ ձևով ջրում են արտերը, ինչ միջոցներ է գործ դնում ժողովուրդը ջուր գտնելու, աղբիւրներից օգտվելու, կամ հորեր փորելու համար,—այդ բոլորն էլ պէտք է ուսումնասիրեն երկրագործական ընկերութիւնները:

Ահա մի նոր, թեև կարճ կերպով գրած պրոգրամ, որ յանձնում էնք կրկին մեր լրագրի թղթակիցների դիտողություններ:

Հրաւիրում ենք այդ բոլոր ան-  
հրաժեշտ առարկաների վրա մեր  
թիզթակիցների ուշադրութիւնը:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՐԻՄԱՆԻՑ մեզ գրում են. հոկտեմբերի 8-ին կատարվեցաւ սուրբ Գայանեան օրիորդաց զբոսը՝ րոցի տարեգարձը. Նրևանի ամբողջ հասարակը թիւնը ներկայ էր տարեգարձին: Վահան վարդապետ Բաստամանց մի ճառ կարդաց, որը վերջնալուց յետոյ ուսումնական տեսուչ Յովսէփի ժախնալով Ալեկանը հայիւ ներկայացրեց ձայնից երևում է, որ 1876 թ. օրիորդաց ուսումնարանը 40 ռուբլ պարտք է ունեցել, իսկ այժմ բացի այն, որ ուսումնարանապատկան վերջերով բեմ չիսկաց, ուսումնարանը 2000 ռուբլու գումար ունէ: Թատրօնը նամակագրի կարծիքով տարեկան երեք հազար ռուբլ եկամուտ ու տալ:

Մեզ գրում են ԵՐԵՎԱՆԻՑ, որ հոկտեմբեր 8-ին այնտեղի հայոց թատրոնում մի ներկայացումն են տուել յօգուտ արքունական պրոզիկանգիայի նկարչուհուս ուսուցիչ պ. Գեօրգիւզերի, որ նկարել է թատրոնի ղեկորացիաները Ներկայացուցող 250 բուրլ եկամուտ է տուել:

Պարոն Յովսէփ Աստուածատուրեան իզմիրեան ուղարկեց մեզ Ս. ՊԵՏԵՐՐՈՒԴՐԻՅՅ յօգուտ «Արարատեան ընկերութեան» 10 բուրջ:

ՆՕՎՕ-ԻՎԱՆՕՎԿԱ Կայարանից պ. Ալեք  
սանդր Շահինեանից ստացանք 10 ՐՈՒՐԼ յօգուտ  
«Արարատեան ընկերութեան»

Մեզ հաղորդում են ՆՕՎՕ-ի վԱՆՕՎԿԱ գիւ  
ղից, որ ինչպէս այնտեղ նոյնպէս էլ Նօյ/օ-]]ա

բառով, Միխայելովա ժաղականների և Բաշ-  
քեանդ, ձամբարակ հայ գիւղերում ծաղիկը սաս-  
տիկ տարածված է: Յիշեալ գիւղերում եկած  
անդադար անձրևները մեծ վնասներ տուին,  
չունձր փտում է:

**Մեզ դրում են ՀԱՄԱԽՈՒԹՅՈՒՆ՝ «Բաղադրի հա-  
րուստներից 40 մարդ մի ընկերություն են կազ-  
մել և նաև՝ հանելու մեքենայ են բերել տուհլը»**  
**Երկու օր է, որ քաղաքի մօտ գտնվող Զապար-**  
**Քանդի զվարի մոտ հորեր են պորում ԱՂՁՊՐԷ-**  
**թիւն երբ զանկանում այդ շահաւէտ գործին»:**

Նշան տեղից հաղորդում են, որ անտառապետի չնորհիւ քաղաքում փայտը և ածուխը շատ սակաւ է և թանկ գնով է ծախվում Ածուխ բեռը, որ առաջ 1 բուրը արժէր այժմ 3 բ. է ծախվում փայտի սովէրը 50 բ. արժէ, իսկ առայժմ 15-20 բ.:

ԳԱՆՁԱՍԿԻՑ մեզ գրում են. «Շտապում եմ հաղորդել մի լուր, որ գուցե չէիք սպասում Մեր քաղաքի շրջակայ գիւղերի մէջ տիրապետող մի նախապաշարմունք, որ ոչուքին յայտնի չէր, նորերում երեան ելաւ Այդ գիւղերում եթէ մին մեռնում է և նրա բարեկամներից մին շուտով հիւանդանում է, մեռածի դիակը աղզականները, կամ աւելի հմուտ անձինք հանում են և այրում Այդ նախապաշարմունքը կատարելու գիւղացիք կարծում են, որ հիւանդը կառուղջանայ՝ վարչութիւնը մի քանիսին կալանաւորեն է, Ասում են, որ դաւառապետի օգնականը քան դեռ է տուել մի քանի զերեզմաններ և ոչ մէկ մէջ դիակ չէ գտել։ Ասում են, որ գիւղացիները մտադիր են բողոքել տեղական վարչութեան վրա, եթէ նրանց արգելեն հետեւ իրանց սուրբ հիւանդները։ Նորա ասում են, որ դիակները լրդհանումը համաձայնութեամբ են այրում և որ թէ թշնամաբար»։

Մեզ հաղորդում են ԷՋՄԻՍՄՆԻՑ, որ Սոս  
քիաս արքեպիսկոպոսը, որ Գեղարդի վանք  
աջոսրված էր, կանչված է Վեհապառու կաթողի  
կոսից Էջմիածին: Ասում են, որ նրան ճեմարան  
ուսուցչի պաշտոն են յանձնեցու:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՒ

Աֆղանիստանի հետ պատերազմ սկսելու  
դեմ ըրդ Գրեյ տպեց հոռուեալ նամակ  
անգրիական «Times» լրագրի մէջ:

Աֆգանիստանին պատերազմ յայտնելը քան անիրաւ է, նոյնքան էլ անբաղաճ գիտական է, ասում է լորդ Գրէյ: Կարու էմիրը չանարգեց Անգլիային, որ գոնէ չլինէր պատերազմի պատճառը: Ինչպէս անկախ Թազուոր նա նոյնքան իրաւունք ունէր մերժել անգլիական դեսպանութեան ընդունելը, որքան իրաւունք ունէր չը բացասել Ռուսաստանին: Գուցէ նա անբաղաճաւոր է, բայց նրա այդպիսի վարմունքի պատճառով Անգլիայի ընդունած դրութիւնն է էմիրը վերաբերութեամբ: Քանի որ էմիրը իրաւ թոյլ չի տայ յարձակվել Անգլիայի կայունածների վրա, Անգլիան իրաւունք չունի նրա պատերազմ յայտնել: Այսպիսի վարմունք իրաւացի կը լինէր: Անհրաժեշտ է հարցը մեկնել ի՞նչ ռուս զօրու կարող է ունենալ Անգլիան եթէ նա պատերազմից յաղթող դուրս գայ եթէ անգլիական զօրքերը մինչև անգամ կարողանան յաղթել Աֆգանիստանին և վերջ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերից) :

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարում թիւնների համար վճարում են  
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ջնականապէս նուաձել, երկրի գրաւումն Անգլիային աւելը թանգ կը նստի, քան թէ ինքն Աֆգանիստանը արժէ: Նիր-Ալիին կարելն է գահընկեց անել և նրա տեղ ուրիշն բարձրացնել Աֆգանիստանի գահի վրա, բայց այդպիսի գործն էլ լաւ հետևանքներ չէ կարող ունենալ: Անգլիական կառավարութիւնը մի ժամանակ Աֆգանիստանի էմիր նշանակեց Սուջահ շահին, բայց նրան գահընկեց արին. այդպիսի սխալ չը պէտք է կրկնէր:

Լորդ Գրեյ Հաւատացած է, որ ինչքան էլ Անգլիան աշխատէ, այնուամենայնիւ նա մի ժամանակ ստիպւած կը լինի Հեռանալ Աֆգանիստանից և Անգլիայի այդպիսի քայլը բացի այն որ նրա Հեղինակութիւնը կոշտացնէ աֆգանիստանցիների առաջ, մի և նոյն ժամանակ նրանց կը մօտեցնէ Ռուսաստանին: Այդպիսով Աֆգանիստանը Ռուսաստանի ձեռքին մի գործից կը լինի նրա թշնամական դիտակորութիւնները իրագործելու համար, եթէ ճշմարիտ Ռուսաստանը ունի այդպիսի դիտակորութիւններ:

Մի ուրիշ պարոն Ջարլը Տրիվերշայն նոյնպես նամակ տպեց «Times» լրագրի մէջ՝ Նա ևս պաշտպանում է խաղաղութեան գործը և կարծիք է յայտնում, որ Անգլիան աւելի լավ վարված կը լինի, եթէ նա աշխատէ յարակիցութեան ճանապարհները լաւացնել, առևտւական յարաբերութիւններ կապել և այդպիսով բարեկամանալ Աֆգանիստանի հետ։ Այդպիսի գործ առաջ տանելու համար կը հարկաւորվէր պատերազմի համար պէտք եղած ծախսերի միայն մի մասը։ Ժողովուրդները միշտ համակրում են այն ազգին, որը իրանց յահերին է ծառայում։

Կ. ՊՕԼՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ՆԻՍՏԸ

Ազգային Ժողովը երեկ իր սովորական նիստն ըրաւ ի Ղալաթիա ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Եւստուֆեան Տիգրան Էֆէնտիի, որ շատ աղմկակց և զրեթէ ապարդիւն եղաւ։

Ժողովը ատենական դործողութենէ և ազգային երեսփոխան Ֆնէրճեանն Յովակիմ և Չալեան Նիկոս էֆէնտիներու հրաժարականն ընդունելէ վերջը անպատեհ կերպով Հայկական խնդրոյ մասին նախաքննիչ մասնախումբի տեղեկագիրին վճռաբանութեանը պարագեցեալ առանց օրակարգին մէջ նախադասեալ խնդիրները կանխառուշաբանութեան առնելով կամ Հայական խնդրոյ տեղեկագիրին քուէարկութեամբ ստիպողութիւն տալու: Նախաքննիչ մասնախումբի տեղեկագիրը կրօնք թիւ Ազգային Ժողովը որոշման համեմատ մասնախումբը Ս. Պատրիարքին դիմելով բոլոր թուղթերը աչքէ անցուցեր և ազգային շահոյ հակառակ բան մը չէր գտեր. հետեւաբար ուզեր է Պէկեան էֆէնտիին թուղթերն ալ տեսնել, զոր մերժեր է Պէկեան էֆէնտի մասնախումբին ներկայացնել պնդելով թիւ մասնախումբը այդպիսի պաշտօն մը չէ ընդունած Ազգային Ժողովէն:

Ասոր լրայ ջերմ վեճաբանութիւն և բա-  
նակով և մը ծագեցաւ ժողովին մէջ, ժողո-  
վականք ոմանք կառարկէին թէ Պէկեան էջ.



Իւր թուղթերը մասնաւորօրէն ներկայացնել պարտաւոր է այլք ունենալ կը պնդեն թէ երեսփոխանական ժողովը պէտք է ներկայացնէ ուրիշներ ալ կըսեն թէ Պէկեան էֆէնտի թուղթերը յատկապէս ժողովը չը կարգաւոր հասարակութեան կասկածանաց աւելի ոյժ է գայթակղութեան պատճառ կուտայ. ուստի պէտք է ժողովը լսէ ու տեսնէ այդ թուղթերը: Պէկեան էֆ. կը յայտարարէր թէ իւր թղթոյ պարունակութիւնը ոչ քաղաքականութեան և ոչ ազգային շահոց դէմ է, թէ ինքն է պատասխանատուն և ոչ այլ ոք: Այդուհետ երթալով կը մեծնար և Ս. Պատրիարք հայրը երեսփոխանաց խնդրանաց վրայ քանիցս անգամ հրաման ըրաւ Պէկեան էֆէնտի իւր թուղթերը կարգաւոր և Պէկեան էֆէնտի ս. նախագահին աջն առնելով քանիցս անգամ ընմը ելաւ թղթոց ծրար մը ի ձեռն յունեն ժողովին կարգաւոր համար, սակայն աստիճանաւ էֆէնտին միշտ ժողովին կամաց դիմեց և ժողովը մեծամասնութեամբ որոշեց ընդգրկել 13 քուէի որ Պէկեան էֆ. նախաքննիչ մասնաւորօրէն պարտաւոր է իւր թուղթերը ներկայացնել: Պէկեան էֆ. այս որոշման դէմ բողոքեց և յայտարարեց թէ իւր թուղթերը նախաքննիչ մասնաւորօրէն ներկայացնելու պարտական չէ և չը պիտի ներկայացնէ:

Ատենապետ էֆէնտին ժողովին ծանոյց թէ Գաղ. ժողովը հրաժարեալ 5 անդամաց տեղ նորոգ ընտրութիւն կատարելու համար զիջելով ցանկ մը պատրաստուած է. ժողովը որոշեց ընտրութիւնը յառաջիկայ նիստին կատարել:

Ատենապետ փառնեցաւ ճիշդ ժամը 10-ին: Մենք մինչև երէկ այնպէս կը կարծէինք թէ Պէկեան էֆէնտի աւագածողովոյ ներկայացնել ծրարքի միասնակարգութիւնը պիտի ցուցնէ և զայն պիտի քննադատէ, սակայն երէկ տեսնեց որ Պէկեան էֆէնտի թուղթերու ծրար մը ունի որոյ միջոցաւ Հայկական խնդրոյն մէջ դաւ և խարդաւանանք գործուած ըլլալը հաստատուելու և ապացուցանելու կարող է պատրաստ ըլլալը կը յայտարարէր: Ուստի մէք և մեզն հետ շատ երեսփոխաններ և կարծեմք ամբողջ ժողովուրդը հետաքրքիր ըլլալով այդ թուղթերուն պարունակութիւնը հասկնալու, կը խնդրեմք Պէկեան էֆէնտին որ զանազան հրապարակը հանէ կամ լրագրութեան միջոցաւ և կամ առանձին տետրակաւ մը, որպէս զի ամէն

բան մերկապարանոց լինի և ինչ տեսակ խաղեր խաղցուեր և յիշք են կընել տաւոր հեղինակները, երեսն ելնեն:

(Հայրենիք)

ՆԱՄԱԿ ԹԻՒՆՔԻՍԱՅԻՑ

Կ. Պօլս 2 հոկտեմբեր 78

Ազգային երեսփոխանական ժողովը գումարեցաւ սեպտեմբերի 22-ին և պիտի զբաղէր ազգային դատարարական, պատրիարքարանի պաշտօնէից ամսականաց և Հայկական խնդրոյ վրա:

Երեսփոխանական ժողովը այս նիստը շատ աղմկալից էր և ցաւալի տեսարան մը կը ներկայացնէր, Հայ ազգի անվայել ներկայացուցիչներու — ժողովը աստիճանաւ և աստիճանալի իրենց պաշտօնական ավանդուքով վրայէն կը կռուին միմեանց հետ, ժողովականք կը գոչեն, կը պոռան կարգի և կանոնի հակառակ, չեն թոյլ տար որ աստեալանք ընմէն խօսին:

Գիտէ՞ք որ պ. Պէկեանի ըրած ամբաստանութեանց վրա մի մասնածողով կազմուած էր Հայկական խնդրոյ մասին պատրիարքի ընթացքն քննելու համար: Մասնածողովը միայն պատրիարքի գրեթե տեսած էր. պ. Պէկեան զանազան պատճառներով չէ ուզած իւր թղթերն ներկայացնել: Մասնածողովը պատրիարքի գրեթե մէջէն ազգային շահոց հակառակ կէտ մը չէր գտած և իւր տեղեկալիքը սապէս կաւարտէր Վերջ մասնածողով կեդրակացնէ իւր տեղեկալիքը թէ, Ս. Պատրիարք հօր Հայկական խնդրոյ վերաբերեալ բոլոր գրութիւններն տեսնելով և քննելով, բնաւ կասկածի կէտ մը չէր տած չէ անոնց մէջ և այլն:

Սակայն պ. Պէկեան ժողովի մէջ յայտարարեց թէ ինքն պատրաստ է իւր ամբաստանութիւններն հաստատել և ծրար մը թուղթ հանեց զորս կողմէր ժողովի մէջ կարգաւ, սակով թէ այդ թղթերն մեծ գաղափարներ երեսն պիտի հանեն, և թէ այդ գրերն ինքն ժողովի մէջ կողմէ կարգաւ և ոչ այլ ուր. բայց ժողովը չուզեց այդ ընթերցումը լսել և որոշեց որ պ. Պէկեան զգրերն մասնածողովին տանի, սակայն նա կը պնդէր թէ պիտի չը տանի, «ամեն ջանք կընէք, զուցե, որ այս խնդրին խեղդուի» հետաքրքրաբար կը սպասեմք յայտնի ժողովին որ հաւանութիւն հոկտեմբերի 6-ին պիտի գումարի:

Ի՞նչ եղաւ դատարարական խնդրին: Մենք չեմք կրնար հաւատալ որ երեսփոխանական ժողովը ազգային դատարարական կատարողութիւնը ըմբռնելու չափ կարող անձանց թիւն շատ նուազ է երեսփոխանական ժողովը մէջ: Փոռ խնդրներով զբաղել են միշտ և կընուեն անաւանակ նոցա գործն:

1870-ին մի օր, առաջին անգամ լինելով կենացս մէջ, երեսփոխանական ժողովը նիստին

ունկնդիր էի. կաթողիկոսական, Սիւրի թէ Աղթամարայ, լաւ չեմ յիշեր, անվերջանալի խնդիրներէն մին էր լիմաբանութեան առարկայ: Սիւրի երկտաւար և հայրենասէր բժիշկ պ. իւթիւճեան առթիւ, առաջարկեց որ նախ ազգային դատարարական խնդրով զբաղի ժողովը, լուծէ զայն և կարգադրէ և ապա ինչ խնդրով որ կողմէ ժողովը զբաղի: Սակայն թոյլ չը տուին որ այդ երկտաւարը խօսի, լռեցուցին զինքն: Այդ օրէն ի վեր ութը տարիներ անցան, ութը տարիներ յորում Հայ ազգի ներկայացուցիչներն երբեք լրջաբար պահ մը ազգային դատարարական վրա չը մտածեցին: Այս միջոցաւ քանի հազարաւոր աշակերտներ փնջացան և այսօր թէ Պօլս և Հայաստան ամենացաւալի դրութեան մէջ են վարժարաններ: Եւ երբ կը տեսնեմք որ այս վշտալի տեսարանին առաջ մեր երեսփոխաններն անխղճաբար իրենց կռիւներն կը շարունակեն չեմք կարող չը զգուիլ այդ մարդերէ:

Գալով պատրիարքանի պաշտօնէից ամսականին, այդ պաշտօնեաներն աշխատասէր, հաւատարիմ անձինք են և ուր 15—20 տարի է կաշխատեն, և սակայն այսօր շատ գոհ պիտի լինէին եթէ իրենց երեմն ընդունած ամսականին կէսն իսկ ընդունէին, կաղաչին, կը պաղատեն, բայց ոչ ոք նոցա կը լսէ:

Պատրիարքարան անկարգ. անկանոն և անխախտ միմեանք մէջ է. պատրիարքարանի մէջ չը կայ մի պաշտօնեայ որ եւրօպական լեզու մը գիտնայ. օր մը Ֆրանսայի դեսպան, պ. Ֆուռնիէ այցելութեան եկաւ պատրիարքարան. պատրիարքը հօն չէր և ոչ ոք կարող եղաւ խօսել նրա հետ: Այսօր որ դեսպանաց հետ միշտ յարաբերութեան մէջ է պատրիարքարանը Ֆրանսերէն գրերու համար աղաչանք մէկին մէկաւր կը դիմեն որ գրեն. քաջ ֆրանսերէն գիտցող պաշտօնէի մը պէտքն զգացած են, բայց 40 ֆրանքն աւելի ամսական տալ չեն ուզեր:

Պատրիարքարանի մէջ անխախտութիւնը կը տիրէ, Սեբաստիայի վարդապետ անուն անձին արտօման զէպքը բաւական ապացոյց մ'է: Երբ անձ մը երկար տեսն իւր ընտանիքն անխախտ թողով կը հեռանայ և ընտանիքն պատրիարքարանին դիմէ, պատրիարքարանը կարող է Բ. Դըրան գրելով այդ անձն բռնի իւր հարկերը վերադարձնել. պատրիարքի այս իշխանութիւնը շատ օգտակար է եղած տարաբաղ ընտանիքներու: Սակայն այդմ այդ իշխանութիւնը այնպէս չարաչար գործածեցին, այնպիսի գեղծամբ և առանց պատրիարքի գիտութեան, որ մեծ նախատինք եղաւ ազգին. քաղաքիս եւրօպական թերթերէն մին կը հարցնէր «Այսպէս պիտի գործէին հայք եթէ իրենց ինքնիշխանութիւն տուէր»: Ազգային ամեն թերթերն բողոքեցին: Հարկ եղաւ պատրիարքական պիտանորդը պաշտօնանկ ընել. այս անցքերու պատճառով ինչն ազգային թերթէ մը կտրելով ներկայեալ կը խորհէին:

Հարստահարութեանց լուրերն կը տեղան Հայաստանէն. ոչ միայն հայ թերթերն այլ և քաղաքիս եւրօպական լրագիրներն լի են այդ հարստահարութեանց պատմութիւններով: Կառավարութիւնն ալ իւր կողմէն կրցած չարիքն չը խընայէր. վանայ գիւղերէն այս տարի ոչխարներու վրա տուրք ժողոված ժամանակին երեք տարի առաջ որչափ ոչխար որ հաշուած են նոյն թուոյն վրա կուգին հաշուել, սակայն ժողովուրդը կը լսէ թէ այս վերջին ժամանակներս թէ հիւսնադուրեւներն, թէ պատերազմի պէտքերն և մանաւանդ քրտորեւ աւարտութիւնը շատ պակսեցուցած են ոչխարաց թիւն և հետեալաբար հարկ է նորէն ոչխարներն համարել և ըստ այնմ տուրք առնուլ: Բայց կառավարութիւնը մոռիկ չընէր. ժողովուրդը պատրիարքարանի բողոքեց. պատրիարքարանը Գուռը թաք թիւ գրեց. արդիւնքը տեսնեմք: Տակաւին բարեկարգութիւն յուսամք: Այ մենք որոշեցինք, Անգղիոյ պաշտպանութեամբ և թրքաց ձեռք բարեկարգութիւն յուսան մի utopie է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Հաւատի ընկերութիւնը» հաղորդում է Կ. Պօլսից, որ պ. Լայարդ բանակցելով մեծ վիզիրի հետ ստացաւ նրա համաձայնութիւնը, որ Երզրումի արտաքին կարգի դատարանը կազմվի երկու մասնականներից և չորս քրիստոնեաներից: Առաջ կամենում էին, որ դատարանի անդամ մի քրիստոնեայ լիւրի: Սակայն փառաց անգլիական դեսպանի ցանկութեան համաձայն առաջարկեց հայերին ընդունել մուսուլմանների պաշտօնները, բայց հայերը հրաժարվեցան: Այն ժամանակ անգլիական դեսպանը խնդրեց հայոց պատրիարքից ազգել հայերի վրա, բայց նա մերժեց դեսպանի խնդրիցը, ասելով որ այդ զինքնանքը հայերին չեն բաւականացնում:

— «Temps» լրագրին Կ. Պօլսից հեռագրում են, որ այնտեղ չեն հաւատում Սիւրիաթ-փաշայի վերադարձին:

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԻՑ

10ՆԻՍՆ, 11/23 հոկտեմբերի: Բոմբէյի լրագիրը հաղորդում է, որ անգլիական զորքերի յարձակվելը Կորուլի վրա յետաձգված է մինչև եկող տարին այն նպատակով, որ էմիրը զէմ ուղարկի անյողթիւն և լաւ կազմակերպված ոյժ «Daily News» լրագիրը հաղորդում է, որ անգլիական լրագրի հետ Կորուլի մէջ լաւ էին վարվում: Նա յարաբերութիւններ ունէր էմիրը հաւատարմատար անձանց հետ: Նրա զուրկ զուրկ ժամանակ ուսաց դեսպանը դեռ Կորուլի մէջ էր:

ԲԵՐԼԻՆ, 11/23 հոկտեմբերի: Բերլինի պոլիցիայի նախագահը սօցիալիստների մասին օրէնքի հիման վրա փակեց այստեղ չորս ընկերութիւններ:

| ՀԱՅՏԵՐԵՐԻ 13.                        |       | Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց |    | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե 1878.       |    |
|--------------------------------------|-------|---------------------|----|---------------------------|----|
| ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Հոկտեմբերի 12-ին) |       | ՀՆՈԱԳԻՐ             |    | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց |    |
| Պ                                    | Կ.    | Պ                   | Կ. | Ք                         | Կ. |
| Ուսկին (պոլիսիական)                  | 8 25  | Կովկասի և Ան-       | 1  | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 1  |
| Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.           | 1520  | գրկովկասի քա-       | 2  | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 2  |
| Հին 20 Կ. 72 պր. 1000                | 1235  | ղաքները             | 3  | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 3  |
| Վերջինի 50% առաջի փո-                | 232   | Ռուսաստան           | 4  | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 4  |
| խառնութեան տոմ. 100                  | 228   | Աւստրիա             | 5  | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 5  |
| Նրկորդ 50% վերջինի 50                | 100   | Անգլիա              | 6  | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 6  |
| Մարսիկի կուրսը 261/2                 | 9 97  | Գերմանիա            | 7  | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 7  |
| Կոնգոնի կուրսը 0 զեռայի              | 100   | Ֆրանսիա             | 8  | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 8  |
| Վերջինի կուրսը 121 զ.                | 5 70  | Ֆրանսիա             | 9  | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 9  |
| Կուրսի բարձր                         | 315   | Աւստրիա             | 10 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 10 |
| Աւստրիական բանկի ակ-                 | 102   | Ֆրանսիա             | 11 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 11 |
| ցիան 200 մ.                          | 7 60  | Ֆրանսիա             | 12 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 12 |
| Փոթի թիֆլիսեան երկա-                 | 7 45  | Ֆրանսիա             | 13 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 13 |
| թուղու ակցիան 125 մ.                 | 6 40  | Ֆրանսիա             | 14 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 14 |
| Շաքարը բրգիւր                        | 6     | Ֆրանսիա             | 15 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 15 |
| միւս տեսակը                          | 11 50 | Ֆրանսիա             | 16 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 16 |
| շաքարաւոր                            | 8     | Ֆրանսիա             | 17 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 17 |
| մարսիկի կուրսը                       | 7 25  | Ֆրանսիա             | 18 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 18 |
| Միւս տեսակը հին սերմից               | 4     | Ֆրանսիա             | 19 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 19 |
| Բուրգը թուլի                         | 2     | Ֆրանսիա             | 20 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 20 |
| Թարաքամի                             | 1 30  | Ֆրանսիա             | 21 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 21 |
| Ալիւր Երազալու                       | 12 40 | Ֆրանսիա             | 22 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 22 |
| Երանի                                | 210   | Ֆրանսիա             | 23 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 23 |
| Գարին                                | 140   | Ֆրանսիա             | 24 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 24 |
| Մեծ քաղաքի (քաղաք)                   | 45    | Ֆրանսիա             | 25 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 25 |
| Մեծ քաղաքի (քաղաք)                   | 60    | Ֆրանսիա             | 26 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 26 |
| Մեծ քաղաքի (քաղաք)                   | 26    | Ֆրանսիա             | 27 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 27 |
| Մեծ քաղաքի (քաղաք)                   | 22    | Ֆրանսիա             | 28 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 28 |
| Մեծ քաղաքի (քաղաք)                   | 17    | Ֆրանսիա             | 29 | Ք Ի Ֆ Լ Ի Ս Ե Կ Ա Ց Ո Ց Ց | 29 |